# Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 55**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ**

**Մաղթում ենք հաջողություն:**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

## Հրահանգ

- **Առաջադրանք ընտրովի պատասխաններով (№1-12, 19.1, 23.1, 23.2)**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, որտեղ դրել եք **X** նշանը, որից հետո միայն նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **1. Համաձայն Վրաստանի Սահմանադրության՝ ո՞ր դեպքում է թույլատրվում արգելել ստեղծագործական աշխատանքի տարածումը:**

ա) Դատարանի որոշմամբ՝ եթե ստեղծագործական աշխատանքի տարածումը խախտում է ուրիշների իրավունքները,

բ) դատախազության պահանջով՝ եթե ստեղծագործական աշխատանքը չի համապատասխանում հասարակության բարոյական նորմերին,

գ) խորհրդարանի որոշմամբ՝ եթե ստեղծագործական աշխատանքը պարունակում է պատմականորեն սխալ կամ չհաստատված բովանդակություն,

դ) մշակույթի նախարարության որոշմամբ՝ եթե ստեղծագործական աշխատանքի տարածումը կարող է սպառնալ ավանդական արժեքներին:

(1) **2. Թվարկվածներից ո՞ր գործոնը կարող է դառնալ պետության ժողովրդավարական համակարգի անկայունացման պատճառ:**

ա) քաղաքական բևեռացումը,

բ) մշակութային ինտեգրումը,

գ) կուսակցական համակեցությունը,

դ) սոցիալական ներառումը:

(1) **3. Վրաստանի Սահմանադրությամբ սահմանված դատավարական իրավունքը կխախտվի այն դեպքում, եթե՝**

ա) մեղադրանքի ապացուցման պարտականությունը դրվի մեղադրողի վրա,

բ) անձը կրկնակի անգամ դատապարտվի միևնույն հանցագործության համար,

գ) օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցը չունենա իրավական ուժ,

դ) անձը դատվի այն դատարանի կողմից, որի իրավասությանն է պատկանում նրա գործը:

(1) **4. Ի՞նչը կարող է լինել գնաճի պատճառներից մեկը:**

ա) Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը,

բ) ընկերությունների միջև բարձր մրցակցությունը,

գ) վարկի տոկոսադրույքի աճը,

դ) փողի զանգվածի աճը:

(1) **5. Արտադրական գործընթացի վրա ի՞նչ ազդեցություն է գործում որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության ժամանակ մասնագիտացման վրա կենտրոնացումը:**

ա) Զգալիորեն բարձրանում է արտադրության արդյունավետությունը և որոշակի ոլորտներում նվազում է թույլ տված սխալների քանակը,

բ) ավելի հեշտ է դառնում հարմարվել փոփոխվող միջավայրին և փնտրել նոր հնարավորություններ որոշակի ոլորտից դուրս,

գ) ավելի քիչ ուշադրություն է դարձվում խորը գիտելիքների ձեռք բերմանը, սակայն խթանվում է ընդհանուր հմտությունների զարգացումը,

դ) դերերը բաշխելիս ավելանում է մշուշապատությունը, ինչը նվազեցնում է անհատական պատասխանատվությունը:

(1) **6. Թվարկվածներից ո՞րն է համարվում տեղական տուրք:**

ա) Բնական պաշարների օգտագործման տուրքը,

բ) բնակելի տարածքի մաքրման տուրքը,

գ) վիճակախաղի կազմակերպման համար սահմանված խաղային բիզնեսի տուրքը,

դ) զորակոչիկների ազգային զինվորական ծառայության զորակոչից տարկետման տուրքը:

(1) **7. Սխեման պատկերում է երկչափ քաղաքական սպեկտր: Ի՞նչ պետք է գրվի հարցականի փոխարեն:**




ա) Կոմունիզմ,

բ) պահպանողականություն,

գ) սոցիալական ժողովրդավարություն,

դ) լիբերալ ժողովրդավարություն:

(1) **8. Համաձայն Վրաստանի օրենսդրության՝ ի՞նչը կարող է հիմք հանդիսանալ մունիցիպալիտետի ստեղծման կամ լուծարման համար:**

I. Մունիցիպալիտետի բաժանումը երկու կամ ավելի մունիցիպալիտետների,

II. մունիցիպալիտետի տարածքի մի մասի փոխանցումը ներդրողին,

III. սահմանակից մունիցիպալիտետների միավորումը մեկ ընդհանուր մունիցիպալիտետի մեջ:

ա) Միայն I և II,

բ) միայն II և III,

գ) միայն I և III,

դ) երեքն էլ:

(1) **9. Համաձայն Վրաստանի օրենսդրության՝ ի՞նչ լիազորություններ ունի հաշտարարը (մեդիատոր) հաշտարարության (մեդիացիա) գործընթացն իրականացնելիս:**

I. Հաշվի առնելով գործի հանգամանքները՝ կարող է պահանջել կողմի կամ կողմերի անմիջական մասնակցությունը հաշտարարության գործընթացում,

II. հաշտարարությունը կարող է իրականացնել կողմերի հետ ինչպես համատեղ, այնպես էլ անհատական հաղորդակցության միջոցով,

III. կարող է անձամբ կայացնել կողմերի միջև առկա վեճի հետ կապված որոշումը:

ա) Միայն I և II,

բ) միայն II և III,

գ) միայն I և III,

դ) երեքն էլ:

(1) **10. Ո՞ր պնդումն է ճիշտ փոխանցում քաղաքացիական ազգայնականության (նացիոնալիզմ) էությունը ժամանակակից պետություններում:**

ա) Ազգային միասնությունը ձևավորվում է էթնիկ և կրոնական պատկանելության հիման վրա, մինչդեռ քաղաքացիական իրավունքները և հասարակության լայն քաղաքական մասնակցությունը երկրորդական են:

բ) Պետության մեջ միասնությանը հասնում են հիմնվելով պատմական ավանդույթների և մշակութային ժառանգության վրա, մինչդեռ ընդհանուր իրավական սկզբունքներին և ժողովրդավարական մեխանիզմներին պակաս կարևորություն է տրվում:

գ) Ազգային միասնությունը հիմնվում է հիմնականում իրավակարգի և քաղաքացիների պարտականությունների կատարման վրա, սակայն քաղաքական մասնակցությունը սահմանափակ է, իսկ մշակութային բազմազանությունը՝ ավելի քիչ ճանաչված:

դ) Քաղաքացիների միավորումը տեղի է ունենում ընդհանուր իրավական շրջանակի, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հիման վրա, ինչն ապահովում է տարբեր էթնիկ խմբերի ինտեգրումը և նրանց ակտիվ մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներին:

(1) 11. Աղյուսակում ներկայացվում է տեղեկատվություն ապաստան հայցողների ընդհանուր թվի վերաբերյալ՝ ըստ ծագման երկրի:

| Երկրներ | 2010 թվական | 2015 թվական | 2023 թվական | Համեմատական փոփոխություն 2015-2023 |
|---|---|---|---|---|
| Արգենտինա | 84 | 160 | 4 388 | +2 643% |
| Հայաստան | 2 947 | 8 491 | 18 378 | +116% |
| Ադրբեջան | 2 072 | 5 212 | 6 777 | +30% |
| Բելառուս | 737 | 1 472 | 11 837 | +704% |
| Բելգիա | 6 | 37 | 149 | +303% |
| Վրաստան | 7 185 | 9 245 | 38 556 | +317% |
| Շվեդիա | 28 | 15 | 175 | +1 067% |
| Տանզանիա | 194 | 1,577 | 2 954 | +87% |

## Ո՞ր պնդումն է համապատասխանում աղյուսակում ներկայացված տվյալներին:

ա) Ըստ ծագման երկրի՝ ապաստան հայցողների թիվը տարիների ընթացքում բոլոր տեղերում հավասարաչափ է աճում:

բ) Արգենտինայից ապաստան հայցողների թիվը 2010-2015 թվականներին նույնքան է աճել, որքան 2015-2023 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:

գ) 2023 թվականին հետխորհրդային երկրների շարքում բոլորից շատ ապաստան հայցողներ եղել են Վրաստանից:

դ) Ըստ ծագման երկրների՝ ապաստան հայցողների համեմատական փոփոխությունն ամենաբարձրն է եվրոպական երկրներում:

(1) **12.** Ինֆոգրաֆիկայում պատկերված են 2024 թվականի Վրաստանի բնակչության մարդահամարի նախնական արդյունքները՝ ըստ Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության (Սաքստատ) տվյալների:






## Ո՞ր պնդումն է համապատասխանում ինֆոգրաֆիկայի տվյալներին:

ա) Վրաստանի բոլոր տարածաշրջաններում գրանցվում է բնակչության աճի դրական դինամիկա:

բ) Սամեգրելո-Զեմո Սվանեթիում և Կախեթիում միասին բնակչության թիվն ավելի մեծ է, քան Թբիլիսիում:

գ) Մցխեթա-Մթիանեթիի տարածաշրջանի բնակչության թիվն աճել է այնքան, որքան Աջարիայի տարածաշրջանում:

դ) Չնայած նրան, որ 2014 թվականի համեմատ Գուրիայի բնակչությունն ամենաշատն է նվազել, այնուամենայնիվ այնտեղ ավելի շատ մարդ է ապրում, քան Ռաճա-Լեչխումիում և Քվեմո Սվանեթիում:

## Հրահանգ

**Հաջորդականության որոշում (№13)**

Առաջադրանքում ներկայացված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Հաշվի առեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(1) **13. Միջազգային կազմակերպությունները դասավորեք ժամանակագրական կարգով՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**




| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | **4*** | |

* Աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը:

## Հրահանգ

**Համապատասխանության որոշում (№14, 15, 16)**

Առաջադրանքում երկու սյունակով ներկայացված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունն այս երկու սյունակներում տրված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

(2) **14. Կոնֆլիկտային իրավիճակում բանակցային գործընթացի մասնակիցները տարբեր ռազմավարություններ են կիրառում: Համապատասխանեցրեք բանակցային գործընթացում վարքային մոտեցումները բանակցող անձանց բնորոշ հատկանիշներին.**

| | I. Բանակցող անձանց բնորոշ հատկանիշները | II. Վարքային մոտեցումներ |
|---|---|---|
| ա) | ▪ Հոռետեսական,<br>▪ խուսափող,<br>▪ ռիսկի չդիմող,<br>▪ սկզբունք՝ «ոչ մի հաղորդակցություն»: | 1. Իշխանության վրա կենտրոնացում<br><br>2. Արդյունքի վրա կենտրոնացում<br><br>3. Ստատուս քվոյի վրա կենտրոնացում<br><br>4. Բարեկամական հարաբերությունների վրա կենտրոնացում |
| բ) | ▪ Պրագմատիկ,<br>▪ հաշտեցնող,<br>▪ ռազմավարություն մշակող,<br>▪ սկզբունք՝ «երկկողմանի հաղորդակցություն»: | |
| գ) | ▪ Զիջող,<br>▪ հարմարվող,<br>▪ ոչ մրցակցային,<br>▪ սկզբունք՝ «բազմակողմանի հաղորդակցություն»: | |
| դ) | ▪ Ագրեսիվ,<br>▪ մանիպուլյացիայի ենթարկող,<br>▪ չհամագործակցող,<br>▪ սկզբունք՝ «մեկ ճանապարհ՝ իմ ճանապարհը»: | |

(2) **15. I սյունակում ներկայացված տարբեր աշխարհայացքներ արտահայտող մեջբերումները համապատասխանեցրեք II սյունակում ներկայացված քաղաքական գաղափարախոսություններին:**

| I. Մեջբերումներ | II. Քաղաքական գաղափարախոսություններ |
|---|---|
| ա) «Հասարակական ավանդույթները գոյություն ունեն, քանի որ դրանք հասարակությանը վերարտադրության հնարավորություն են տալիս: Այդ ավանդույթներն անզգուշորեն ոչնչացնելով, դու կջնջես այն երաշխիքը, որը սերունդներից մեկը փոխանցում է հաջորդին»: | 1. Անարխիզմ<br>2. Լիբերալիզմ<br>3. Սոցիալիզմ<br>4. Էկոլոգիզմ<br>5. Կոնսերվատիզմ |
| բ) «Քիմիական նյութերի կենսաբանական ազդեցությունը կուտակվում է աստիճանաբար՝ երկարատև ժամանակի ընթացքում: […] Մարդկային բնույթն է, որ անուշադրության ենք մատնում այն, ինչը մեզ կարող է թվալ ապագա աղետի մշուշոտ վտանգ»: | |
| գ) «Մարդու ազատությունը հասարակության մեջ կայանում է նրանում, որ չենթարկվի որևէ այլ օրենսդրական իշխանության, բացառությամբ այն իշխանության, որը երկրում համաձայնությամբ է ընդունվում: Ինչպես նաև չենթարկվի որևէ մեկի կամքին կամ սահմանափակվի որևէ օրենքով, բացառությամբ այն օրենքի, որն օրենսդիրը կընդունի իրեն վստահված լիազորությունների շրջանակներում»: | |
| դ) «Պետության արարքը բռնություն է և իր բռնությունն այն «օրենք» է անվանում, իսկ անհատինը՝ «հանցագործություն»: […] Անհատը միայն հանցավոր ճանապարհով է հաղթահարում պետության բռնությունը, երբ մտածում է, որ պետությունն իրենից վեր չէ, այլ ինքն է պետությունից վեր»: | |
| ե) «Բանվոր դասակարգը պետք է ստեղծի անկախ քաղաքական կուսակցություն, որը հիմնված կլինի համընդհանուր և հավասար քվեարկելու իրավունքի վրա. սա պետք է գրված լինի նրա դրոշների վրա և դառնա նրա գործողությունների հիմնական սկզբունքը: Բանվոր դասակարգի ներկայացուցչությունը երկրի օրենսդիր մարմիններում պետք է վերածվի իրական փաստի»: | |

(1) **16. Քարտեզը պատկերում է աշխարհի տարբեր երկրներում տնտեսական ազատության ինդեքսը 2026 թվականին: I սյունակում ներկայացված երկրներին համապատասխանեցրեք II սյունակում ներկայացված տնտեսական ազատության կատեգորիաները:**




| I. Երկրներ | II. Տնտեսական ազատության կատեգորիաներ |
|---|---|
| ա) Նորվեգիա | 1. Ռեպրեսիվ |
| բ) Ավստրալիա | 2. Հիմնականում անազատ |
| գ) Արգենտինա | 3. Միջին չափով ազատ |
| դ) Իսպանիա | 4. Մեծ մասամբ ազատ |
| ե) Իրան | 5. Ազատ |

## Հրահանգ

**Սխալի ուղղում (№17)**

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Հաշվի առեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

## (7) 17. Ուշադիր ընթերցե՛ք տեքստը, գտե՛ք և ուղղե՛ք սխալները.

**Քաղաքացիությունը և քաղաքական մշակույթը**

Քաղաքացիությունը ոչ միայն իրավական կարգավիճակ է, այլև հասարակության զարգացման դինամիկ գործընթացի պտուղ: Քաղաքացիությունը անձի իրավաքաղաքական կապն է կուսակցության հետ, անհատի իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացիությունը սերտորեն կապված է քաղաքացիական մշակույթի՝ արժեքների, նորմերի և վարքի կանոնների ամբողջության հետ, որոնք ապահովում են քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում: Քաղաքական բարձր մշակույթը երկրի կայունության և ժողովրդավարության աստիճանը որոշող գլխավոր գործոններից մեկն է:

Իշխանության լեգիտիմությունը քաղաքական համակարգի կենսունակության հիմքն է: 1989 թվականի ապրիլի 9-ին Վրաստանի անկախության վերականգնումից հետո քաղաքացիական պատերազմը և տնտեսական ճգնաժամերը զգալիորեն խարխլեցին քաղաքացիների վստահությունը իշխանության նկատմամբ: Արդյունքում առաջացավ լեգիտիմության ճգնաժամ, որը հաճախ դրսևորվում էր քաղաքական ապատիայով կամ բողոքի զանգվածային ցույցերով:

Այս ճգնաժամի ծայրահեղ դրսևորումը դարձավ 2003 թվականի «Նարնջագույն հեղափոխությունը», երբ ընտրությունների կեղծման պատճառով հասարակության դժգոհությունը վերածվեց սուր բողոքի ցույցերի: Այս երևույթն ընդգծում է, որ հեղափոխությունը ոչ միայն իշխանափոխության գործիք է, այլև քաղաքական մշակույթի վերափոխման միջոց:

Վրաստանում քաղաքական գործընթացները միշտ եղել են գաղափարախոսությունների ազդեցության տակ: 1918–1921 թվականներին սոցիալ-դեմոկրատական գաղափարները սահմանում էին անկախ հանրապետության ընթացքը, մինչդեռ

*Անցնել տեքստի երկրորդ*

ժամանակակից փուլում լիբերալ և ժողովրդավարական արժեքների ձգտումը պայմանավորել երկրի եվրասիական ձգտումները:

Ժամանակակից ժողովրդավարական պետություն կառուցելու համար կարևոր է էթնոցենտրիզմը, որը պարզաբանվում է որպես էթնիկ և կրոնական բազմազանություն, որը պահանջում է հավասար քաղաքացիության ապահովում՝ միասնական քաղաքական տարածքում տարբեր ինքնությունների ներդաշնակ համակեցության համար:

Քաղաքական ներկայացուցչությունն այն հիմնական մեխանիզմներից է, որի միջոցով քաղաքացիները մասնակցում էն կառավարմանը: Ուղղակի ժողովրդավարությունը հիմնված է հենց այն գաղափարի վրա, որ ընտրողների շահերն արտահայտում են նրանց կողմից ընտրված առաջնորդները: Այս գործընթացում վճռորոշ դեր են կատարում ընտրությունները, որոնք ոչ միայն իշխանության լեգիտիմության հիմնական աղբյուրն են, այլ նաև քաղաքացիների քաղաքական ակտիվության ցուցիչը:

Ընտրական համակարգերը պայմանավորում են, թե ինչպես են ընտրողների ձայները վերածվում իրական մանդատների: Հեգեմոնական ընտրական համակարգում յուրաքանչյուր կուսակցության պատգամավորների թիվը որոշվում է ստացած ձայների տոկոսի համաձայն: Մեծամասնական ընտրական համակարգում յուրաքանչյուր ընտրատարածքում ընտրված է համարվում ձայների մեծամասնությունը հավաքած թեկնածուն, իսկ մյուս թեկնածուների օգտին տրված ձայները մանդատների չեն վերածվում և ընտրողների ձայների մի մասը կորչում է: Հետևաբար, կուսակցական համակարգերն անմիջականորեն կապված են ընտրական կանոնների հետ և որոշում են քաղաքական մրցակցության աստիճանն ու ինստիտուցիոնալ կառուցվածքը:

*Վերադառնալ տեքստի առաջին էջին*

## Հրահանգ

**Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№ 18, 19.2, 19.3, 20, 21, 22, 23.3-23.7)**

Ուշադրությամբ ծանոթացեք առաջադրանքի պայմանին: Պատասխանների թերթիկի համապատասխան տեղում գրեք առաջադրանքի պայմանին համարժեք, կոնկրետ, հստակ ձևակերպված պատասխանը: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

(4) **18. Սխեման մասամբ է արտացոլում կառավարման տարբեր ձևերը և դրանց համապատասխան բնութագրերը: Լրացրե՛ք աղյուսակը.**

| Կառավարման ձևեր | Կառավարման նկարագիր | Պետական վերահսկողության մեխանիզմներ | Լրատվամիջոցների ազատության աստիճանը |
|---|---|---|---|
| **Օլիգարխիա** | 18.1 | Տնտեսական ազդեցություններ, կոռուպցիոն կապեր, քաղաքական լոբբինգ | Սահմանափակ, հաճախ վերահսկողության տակ է |
| **Դիկտատուրա** | Իշխանությունը կենտրոնացած է մեկ անձի ձեռքում | Ուժային կառույցներ, գրաքննություն, քաղաքական բռնաճնշումներ | 18.2 |
| 18.3 | Պետությունը ղեկավարում է հոգևորականը կամ կրոնական հաստատությունը | Կրոնական օրենքներ, կրոնական դատարաններ, բարոյական ոստիկանություն | Խիստ կրոնական գրաքննություն, լրատվամիջոցները վերահսկվում են կրոնական հաստատությունների կողմից |
| **Ժողովրդավարություն** | Ժողովուրդը կառավարում է պետությունը անմիջականորեն կամ ներկայացուցիչների միջոցով | 18.4 | Բարձր, լրատվամիջոցները անկախ են և բազմակարծիք |

(3) **19.** Ներկայացված է 2024 թվականի աշխարհի քարտեզն առանց լեգենդի: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանե՛ք հետևյալ հարցերին.



(1) **19.1 Ի՞նչ է պատկերված տրված քարտեզի վրա:**

ա) Խաղաղասիրության գլոբալ ինդեքսը,

բ) Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը,

գ) Ակադեմիական ազատության աստիճանը,

դ) Բնակչության կրոնականության աստիճանը:

(1) **19.2 Քարտեզի տվյալների հիման վրա անվանե՛ք աշխարհում ամենացածր ցուցանիշն ունեցող երկու երկրները:**

(1) **19.3 Դատողություն արեք Արևմտյան Եվրոպայի երկրներում տիրող իրավիճակի և դրա հիմքում ընկած պատճառների շուրջ:**

(5) **20. Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.**

I. Որոշեք և գրեք II խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից: *(Առաջադրանք 20.2)*

II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք կնպաստեն աղյուսակում տրված I խնդրի կատարմանը: *(Առաջադրանք 20.3)*

III. Որոշեք և գրեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդիրների և դրանց իրականացման ուղիներից ելնելով: *(Առաջադրանք 20.1)*

| | | |
|---|---|---|
| (1) | 20.1 | **Նախագծի նպատակը.** *(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով):* |
| (1) | 20.2 | **Նախագծի I խնդիրը.**<br>**Վաղ ամուսնության վնասակար հետևանքների գիտակցումը աշակերտների կողմից:**<br>**Նախագծի II խնդիրը.** *(որոշեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով II խնդրի իրականացման ուղիներից):* |
| (3) | 20.3 | **I խնդրի իրականացման ուղիներ.** *(գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղի):*<br>1<br>2.<br>3.<br>**II խնդրի իրականացման ուղիներ.**<br>1. Հրավիրված իրավաբանի կողմից դպրոցական համայնքի համար սեմինարի անցկացում՝ «Վրաստանի օրենսդրությունը և վաղ ամուսնությունը» թեմայով:<br>2. Դպրոցական ցուցահանդեսի կազմակերպում աշակերտների կողմից. «Անչափահաս տարիքում ամուսնության կանխարգելիչ մեխանիզմները»:<br>3. Աշակերտների կողմից «Վաղ ամուսնությունը հանցագործություն է» տեղեկատվական գրքույկների ստեղծում և տարածում համայնքում: |

(4) **21. Ծանոթացե՛ք նկարին և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.**

(1) 21.1 Ո՞րն է նկարի գլխավոր գաղափարը:

(1) 21.2 Բացատրեք, թե ինչու դավադրության տեսությունները կարող են ավելի գրավիչ լինել հասարակության որոշակի խմբի համար, քան ակտիվ քաղաքացիությունը:

(2) 21.3 Դատողություն արեք փաստարկներով, թե քաղաքացու իրական բարեկեցության վրա ինչ ազդեցություն է գործում դավադրության տեսություններով հետաքրքրվելը: Դատողություն արեք այլընտրանքային ժողովրդավարական քաղաքական գործընթացի շուրջ:

(5) **22. Ծանոթացե՛ք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված ցուցումների համապատասխան.**

«Այսօր Ներկայացուցիչների պալատը հաստատեց օրենք, որը կթեթևացնի առևտրի և գլոբալացման բեռը մեր աշխատուժի համար: «Գլոբալացում» բառը նկարագրում է մի աշխարհ, որը տեխնոլոգիական փոփոխություններին և նորարարություններին համընթաց գնալով ավելի է փոքրանում: Գլոբալացումը միատարր ուժ չէ, այլ զարգացող հետևանքների մի ամբողջ համալիր՝ երբեմն դրական, երբեմն բացասական, իսկ երբեմն էլ՝ անկանխատեսելի: Սա նոր իրականություն է»:

**Ջոն Բ. Լարսոն, հատված «Գլոբալացում. հանդիպում իրականության հետ» հոդվածից:**

(1) 22.1 Ելնելով տեքստից հստակ որոշեք և անվանեք բանավեճի թեման, որը կընձեռի երկկողմանի բանավեճ վարելու հնարավորություն: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության շուրջ:

(4) 22.2 A. Նշե՛ք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ձևավորված դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Նշե՛ք երկու փաստարկ բանավեճի ընթացքում ձևավորված դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է ունենա էականորեն տարբերվող իմաստ)

(9) **23. Վերլուծե՛ք տրված աղբյուրները և պատասխանե՛ք հարցերին.**

**Աղբյուր N1**

«Սեփական տեսակետը ուրիշների տեսակետների հետ համեմատելով՝ այն մշտապես վերանայելու և լրացնելու անսասան սովորությունը ոչ միայն չի առաջացնում մարդու մեջ կասկած կամ տատանում իր տեսակետը գործնականում կիրառելու հարցում, այլև միակ ամուր հիմքն է դրա նկատմամբ վստահությունն արդարացնելու համար: Իսկապես, եթե մարդը հասկացել է այն ամենն, ինչ կարող է ասվել իր տեսակետի դեմ և ընդդեմ իր բոլոր հակառակորդների շարունակում է մնալ իր դիրքորոշման վրա, քանի որ գիտի, որ ոչ միայն չի խուսափել առարկություններից և դժվարություններից, այլ ընդհակառակը՝ որոնել է դրանք և բաց չի թողել որևէ աղբյուր, որը կարող էր լույս սփռել հարցի որևէ կողմի վրա, ապա նա իրավունք ունի մտածելու, որ իր տեսակետը գերազանցում է ցանկացած այլ մարդու կամ բազմաթիվ այլ մարդկանց տեսակետներին, որոնք նմանատիպ գործընթաց չեն անցել»:

**Ջոն Ստյուարտ Միլ, «Ազատության մասին», 1859 թվական:**

*Անցնել աղբյուրներին՝* *2* *3* *4* *5*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2* *23.3-23.7*

**Աղբյուր N2**

«Խոսելու ունակությունն է, որ մեզ տարբերում է մյուս կենդանիներից և, առայժմ, նաև համակարգիչներից: Եթե մեզ խանգարեն ազատորեն օգտվել այդ ունակությունից, մենք չենք կարողանա լինել ինքներս մենք: Սա նշանակում է, որ մենք պետք է կարողանանք մեզ ներկայացնել ուրիշներին այնքանով, որքանով ինքներս ենք ցանկանում: Եթե կապեք իմ ձեռքերն ու ոտքերը, գլխիս քող քաշեք կամ փակեք բերանս, ես կարող եմ մտածել հետևյալը. «Իմ մտքերն ազատ են. դա դուք ինձնից չեք կարող խլել»: Սակայն նույնիսկ մտքի այդ ամենախոր ազատությունը չի կարող լիովին առանձնացվել արտահայտվելու ազատությունից: Յուրաքանչյուր ոք, ով գրում կամ խոսում է, գիտի, որ մարդը հաճախ իր մտքերն իրականում բացահայտում է հենց խոսելու կամ գրելու ընթացքում: «Միտքը ծնվում է բերանում», - ասել է դադաիստ Տրիստան Ցարան:

**Տիմոթի Գարթոն Աշ, «Խոսքի ազատություն», 2016 թվական:**

*Անցնել աղբյուրներին՝* *1* *3* *4* *5*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2* *23.3-23.7*

## Աղբյուր N3

«Ոչ մի կառավարություն չի կարող գոյատևել, եթե մարդկանց մեջ «վատ մտքեր» սերմանողները պատասխանատվության չեն ենթարկվում», - ասել է Անգլիայի գլխավոր դատավորը՝ անդրադառնալով 1704 թվականի մի պամֆլետի, որը պետական պաշտոնյաներին մեղադրում էր կոռուպցիայի մեջ: Նույնիսկ ավտոկրատական իշխանությունը պահանջում է ժողովրդական վստահության որոշակի չափաբաժին, իսկ ցանկացած վստահություն անցողիկ է: Իշխանությունն անընդհատ պետք է վերահաստատվի, և դրա միջոցներից մեկը արգելված տեքստերի ոչնչացումը հանրային տեսարանի վերածելն է: Այդպես է եղել Ցինի, Մաոյի և իսպանական ինկվիզիցիայի հարձակումների ժամանակ և այդպես է շարունակվում մինչ օրս: Վիրավորական համարվող նյութերի հրապարակային ոչնչացումը, հատկապես՝ այրման միջոցով, վկայում է, հանրային քննարկումը վարելու և, որն առավել կարևոր է, ընտրված տեքստերում արտահայտված գաղափարները ջնջելու կառավարչի միանձնյա արտոնության մասին: Այն, որ մտքերն ու կարծիքները շարունակում են մնալ մարդկանց գիտակցության մեջ, բացարձակապես անկարևոր է: Այդ մտքերի գոյությունն ինքնին ընկալվում է որպես վիրավորանք և անհրաժեշտ է որոշակի ուղղումներ կատարել, չնայած նրա, որ դրանք բացարձակապես փուչ են: Տեքստերի ոչնչացումն, ըստ էության, իշխանության խոստովանություն է, որ այն չի կարող համագոյակցել հակադիր կարծիքների հետ: Գրաքննությունը, այս կամ այն չափով, միշտ էլ թուլության դրսևորում է»:

**Էրիկ Բերկովից, «Վտանգավոր մտքեր», 2021 թվական:**

*Անցնել աղբյուրներին՝* *1* *2* *4* *5*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2* *23.3-23.7*

**Աղբյուր N4**

«Քանի դեռ գոյություն ունեն կազմակերպված հասարակություններ միշտ պետք է գոյություն ունենա և կունենա գրաքննության որոշակի աստիճան: Սակայն ազատությունը, ինչպես ասել է Ռոզա Լյուքսեմբուրգը, «ուրիշին շնորհված ազատությունն է»: Նմանատիպ սկզբունք է արտահայտված նաև Վոլտերի հայտնի խոսքերում. «Ես ատում եմ այն, ինչ դու ասում ես, բայց կյանքիս գնով կպաշտպանեմ այն արտահայտելու քո իրավունքը»: Եթե մտավոր ազատությունը, որն, անկասկած, միշտ եղել է արևմտյան քաղաքակրթության անբաժանելի առանձնահատկությունը, առհասարակ որևէ բան նշանակում է, ապա դա նշանակում է, յուրաքանչյուր մարդ պետք է իրավունք ունենա խոսելու և հրապարակելու այն, ինչ ինքը ճշմարիտ է համարում, հաշվի առնելով, որ դա ակնհայտ վնաս չի պատճառում հասարակության մնացած մասին»:

**Ջորջ Օրուել, «Մամուլի ազատություն», 1972 թվական:**

*Անցնել աղբյուրներին՝* *1* *2* *3* *5*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2* *23.3-23.7*

**Աղբյուր N5**

«Պետության կառավարիչը ատելությամբ է վերաբերվում գրողին, քանի որ նա այլախոհություն է սերմանում: Մարդկանց մտածողությանը խոչընդոտելու հնարավորության մասին երազելով՝ կառավարիչն անդադար մեղադրում է արվեստագետներին և գրողներին կարգավորված պետության մեջ խռովություն ու անկարգություն մտցնելու մեջ»:

**Լու Սին, 1881-1936 թվականներ:**

*Անցնել աղբյուրներին՝* *1* *2* *3* *4*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2* *23.3-23.7*

(1) **23.1 Համաձայն N1 աղբյուրի՝ ո՞ր դեպքում մարդն իրավունք ունի մտածելու, որ իր տեսակետը մյուսների տեսակետներից ավելի լավն է:**

ա) Մեծամասնությունը համակարծիք է այն տեսակետի հետ, որը նա պաշտպանում է,

բ) Ժամանակի ընթացքը ցույց է տալիս, որ նրա տեսակետները ճիշտ են,

գ) Չնայած հակառակ կարծիքների քննարկմանը նա միևնույն է հավատարիմ է մնում իր կարծիքին,

դ) Փաստարկները ներկայացնում է հստակ և ուրիշների համար հասկանալի ձևով:

*Անցնել աղբյուրներին՝* *1* *2* *3* *4* *5*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.2* *23.3-23.7*

(1) **23.2 Համաձայն N3 աղբյուրի՝ ինչո՞ւ է միանձնյա կառավարիչը հրապարակավ այրում «վիրավորական համարվող նյութերը»:**

ա) Պետության ազգային շահերը պաշտպանելու համար,

բ) Հասարակության քաղաքական գիտակցությունը բարձրացնելու համար,

գ) Բնակչության շրջանում ատելության տարածումն արմատախիլ անելու համար,

դ) Հանրային քննարկման նկատմամբ միանձնյա վերահսկողությունը ցույց տալու համար:

*Անցնել աղբյուրներին՝ 1 2 3 4 5*

*Անցնել առաջադրանքներին՝ 23.1 23.3-23.7*

(1) 23.3 Ըստ Ջոն Ստյուարտ Միլի՝ ինչո՞ւ է կարևոր հասարակության մեջ քննադատական կարծիքների առկայությունը:

(1) 23.4 Համաձայն Տիմոթի Գարթոն Աշի տեքստի՝ ինչո՞ւ մտքի ազատությունը չի կարող լիովին առանձնացվել արտահայտվելու ազատությունից:

(1) 23.5 Գրաքննությունը հաճախ ընկալվում է որպես կառավարչի ուժեղ կողմ: N3 աղբյուրում Էրիկ Բերկովիցը համարում է, որ գրաքննությունը կառավարչի թուլության նշան է: Հիմնավորե՛ք հեղինակի այս տեսակետը:

(2) 23.6 Հիմնվելով աղբյուրների վրա պարզաբանե՛ք Ռոզա Լյուքսեմբուրգի այն տեսակետը, որ ազատությունը ուրիշին շնորհված ազատությունն է: Ըստ Ջորջ Օրուելի՝ ի՞նչը կարելի է համարել արտահայտվելու ազատությունը սահմանափակելու օբյեկտիվ պատճառ:

(2) 23.7 Ինչպե՞ս են արվեստն ու գրականությունը կապված արտահայտվելու ազատության հետ: Փաստարկներով դատողություն արեք, թե ինչու է կարևոր պաշտպանել դրանք գրաքննությունից:

*Անցնել աղբյուրներին՝* *1* *2* *3* *4* *5*

*Անցնել առաջադրանքներին՝* *23.1* *23.2*